

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Վերջերս ստացած պաշտօնական նամակից քաղուածք

«Թուրքիոյ հայութիւնը դարերէ ի վեր չըտեսնուած տազնապ կանցնէ այժմ. համիդական շրջանին ստուեր բերող շրջանի մը մէջ կ'գտնուինք. բանտարկութիւնք, կոտորուածք, գիւղերու աւերում, սպանութիւնք հայաբնակ բոլոր գաւառներու մէջ, և ընդհանուր մեծ կոտորածներու փոխարէն ընդհանուր տարագրումներ:

Ապրիլի սկիզբը Վանայ դէպքը տեղի ունեցաւ, որ առիթ բռնելով կառավարութիւնը քաղաքին հայ թաղերը ումբակոծելով 300 տունի չորս մոխիր դարձուց և 5—600 մարդ սպաննեց: Քիչ յետոյ տեղի ունեցաւ այդ քաղաքին Ռուսական զրաւումը:

Ապրիլ 10-էն ետքը կառավարութեան քաղաքականութեան փոփոխումին և հայոց հանդէպ ի գործ դրուած խստութեանց պատճառը՝ Վանայ մէջ հայոց այգալիսի ընթացք ունենալն է, պատասխանուեցաւ նախարարներէն: Այդ թուականին կեդրոնէն տրուած հրամանի մը վրայ Թուրքիոյ ամէն կողմը խուզարկուեցան բազմաթիւ հայոց տուներ, չխնայելով նոյն իսկ առաջնորդարան, եկեղեցի և վարժարան. հազարաւոր անձեր ձերբակալուեցան, զէնք, փաստակար գիրք, պատկեր և այլն ունենալուն պատճառաւ: Ասկէ դատ առննց որեւէ յանցանքի գրեթէ ամէն քաղաքէ և գիւղէ իսլամաբնակ վայրեր ուղարկուեցան հազարաւոր երևելի հայեր, եկեղեցականներ, մտաւորականներ, հարուստներ և կուսակցականներ, կամ անոնց հետ շփում ունեցող անհատներ: Պօլիսէն 250-է աւելի անձեր աքսորուեցան Զանչըրի (Փասթեմոնի նահանգ) և Այաշ (Փաղատիա), բայց գաւառներուն աքսորականները չափազանց շատ են թուով, Պօլսոյ հետ քաղաքաւելով: Ասիկա որոշ

ծրագրի մը արդիւնք է. հայութիւնը նախ զինաթափ ընել և գլխաւորները աքսորելով ահաբեկել, ապա ազգը ամբողջովին փճացնել: 20—45 տարեկաններն արդէն զէնքի տակ են, միւսները այս կերպով չեզոքացնելէ յետոյ մնացած կիներուն և փոքրիկներուն գլխուն եղերեբգութիւն մը խաղալ: Այս եղերեբգութիւնը կամ դժոխային ծրագիրը հետեւեալն է. հայկական խնդիրը միանգամ ընդմիշտ վերջացնելու համար հայաբնակ վեց նահանգներուն և Կիլիկիոյ հայութիւնը մեծ մասամբ ուշափ հարու փոխադրել, Միջագետքի այն մասը, որ կ'զբոսնուի Հալէպի և Մուսուլի միջև, և ուր կանակին այժմ՝ արաբ և քիւրդ աշխատածներ: Այս ծրագիրը գործադրելու պաշտօնունեցող յանձնաժողովն արդէն ընտրուած և ճամբայ ելած է և կկարծենք թէ, եթէ ժողովուրդին տեղափոխութիւնը չէ սկսած տակաւին, շատ քիչ օրէն պիտի սկսի, թէև կ'կարծենք, թէ Վանայ ոչ դրաւեալ տեղերուն և Բաղէշի հայ բնակչութիւնը սկսած են արդէն ճամբայ հանել: Այլ և երևակայեցէք թէ ի՞նչ պիտի ըլլայ անոնց վիճակը, քանի որ ոչ միայն իրենց կալուածները պիտի ձգեն այլ և իրենց ցանքերն և բոլոր գոյքերը: Անշուշտ քանի մը ամսուան մէջ պիտի կոտորուին անօթութեան և անընտել կլիմայի երեսէն: Օրինակը մեր աչքին առջև է արդէն՝ Զէյթունի և շրջակայից հայութիւնը, ինչպէս անշուշտ իմացած էք, այժմ ամբողջովին տեղափոխուած է, մէկ մասը Հալէպէն անդին Զօր գաւառը և միւս մասը (որո 1000 ընտանիք) Դոնիայի Սուլթանիէ գիւղաքաղաքը, ուր կըմնան այսօր մերկ, անօթի, անպատասպար: Տեղը ճախճախուտ ըլլալով, համաճարակ հիւանդութիւնք արդէն սկսած են կոտորածներ ընել անոնց մէջ: Անոնց հետ յարաբերութեան մտնելու կամ անոնց օգնութիւն հասցնելու համար եղած բոլոր դիմումներն անխելի կիման ցարդ Տաճիկ կառավարութենէն. իսկ անոնց զիւղերն ու կալուածներն արդէն սկսած են յանձնուիլ իսլամներու, յատուկ յանձնաժողովի մը ձեռամբ»: